

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝
2016 թվականի հուլիսի 15-ի նիստի N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ռեկտորի պաշտոնակատար, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կորյուն Աթոյան:**

Զեկուցողը նշեց, որ բուհի կառավարման օպտիմալացման և ուսումնական գործընթացի կատարելագործման նպատակով (հաշվի առնելով նաև ուսանողների քանակի սպասվող անընդհատ նվազումը) առաջարկվում է միացման ձևով վերակազմակերպել հետևյալ բաժիններն ու ամբիոնները՝

1. Ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության ու Ուսումնակազմակերպական բաժինները:
2. Գիտության և Ասպիրանտուրայի բաժինները:
3. Կարիերայի և մարքեթինգի ու Շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնները:
4. Ապրանքագիտության և տեխնոլոգիայի ու Կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնները: Հաշվի է առնվել նաև, որ «Ապրանքագիտություն» մասնագիտությունը ներառված չէ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկում, իր որակավորումով չի համապատասխանում համալսարանի պրոֆիլին և չունի զարգացման հեռանկարներ:

Զեկուցողը շեշտեց, որ առաջարկվող փոփոխությունները բխում են ՀՀ վարչապետի և ՀՀ ԿԳ նախարարի՝ կառավարման համակարգի

արդյունավետության բարձրացման հանձնարարականներից՝ հավաստիացնելով նաև, որ դրանով կբարձրանա կառավարման արդյունավետությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հովիկ Աբրահամյանը, Կարեն Ճշմարիտյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Ղեկավարվելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության» կանոնադրության 15-րդ կետի 7-րդ ենթակետով և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության» խորհրդի աշխատակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետով՝ միացման ձևով վերակազմակերպել հետևյալ բաժիններն ու ամբիոնները՝

1. **Ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության ու Ուսումնակազմակերպական բաժինները:**
2. **Գիտության և Ասպիրանտուրայի բաժինները:**
3. **Կարիերայի և մարքեթինգի ու Շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնները:**
4. **Ապրանքագիտության և տեխնոլոգիայի ու Կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնները:**

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն:

ՀՊՏՀ խորհրդի նախագահ

Հովիկ Աբրահամյան

ՀՊՏՀ խորհրդի քարտուղար

Նաիրա Դարբինյան

15.07.2016 թ.